կամաց կամաց համարձակեցաւ, պատէն գրակալը անցաւ, գրակալէն տըղուն վրայ, և մինչև տղուն այն թևը որ աղեղը կը շարժէր։ Հոն զգածեալ և բաբախող սրտիւ՝ ուշ կը դնէր մօտանց։

Այսպէս լռութեան մէջ երաժիշտն իր ունկնդիրն ունէր. և անոր տեսութեանը առջին՝ ոգին կրկին կը բորբոքէր, աշխոյժը եռապատիկ կը վառէր։

Դժբաղդաբար տղան որդեգրեալ էր։ Օր մը որ մայրը տղուն խցիկը երաժշտասէր մը կը մտցընէր, տեսաւ տղուն թևին վրայ այն զգայուն էակը. հողաթափի անակնկալ հարուածով մը, ակնթարթի մը մէջ ունկնդիրը ոչընչացուց...։

Տղան անզգայ՝ կռնկին վրայ ինկաւ. երկաթ ամիս հիւանդ պառկեցաւ, և գրեթէ մահուան դուռը հասաւ։

Հ. Ե. Գ. ԻՍԱՎՐՏԵՆՑ

Կը շարունակուի։

ԵՐՈՒԱՆԴ[1]

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԴԵՐԱՍԱՆՔ

ԵՐՈՒԱՆԴ	ՍՄԲԱՏ
ԱՐՏԱՇԷՍ	ԱՐԳԱՄ
ԵՐՈՒԱԶ	ՄԻՀՐԱՆ
ՏՈՒՐ	ԶԱՐԵՀ

ԶՕՐԱԿԱՆՔ

Տեսարանն է յԵրուսանդաշատ։

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԻԼ Ա.

ՏՈՒՐ, ՄԻՀՐԱՆ

Տր. Փութացի գալ այսր առ իս, մի՛ ինչ յամեցէ։ (Միհրան գնայ)։— Մառախուղ կալեալ է զմիտս արքայի և զաւագանւոյն. ոչ կարեն նշմարել եթէ ո՞ւր է առաքինութիւն որ ըստ չափ ելանէ։... Իսկ զի՞նչդ. բաբախե՞ս դու սիրտ իմ աներկիւղ. էր մտեր 'ի ծով թէ երկընչէիր 'ի հողմոց. մոռացա՞ր զոր այնչափ վարդապետեցարն յինէն եթէ ուղղկից են միմեանց բաղդ և յանդգնութիւն։ Եւ զի՞նչ. միթէ մոռուցի՞ Տուր զգլուխն վիշապաղուն՝ պաճարապէս լռութեամբ զանազգին Երուանդայ ձգել սամեռէս. միթէ ո՞չ դարձուցէ զակն հայել յարտասուս և լսել զհեծութիւն մանկանց Թորգոմայ, զորոց զբնիկ թագաւորութիւն եկեալ յափշտակեաց վայրենիս այս աննշան, և տակաւին ոչ դադարէ հանել սպանդ անողորմ իւրոյ փառամոլ ախտին զընտիրս աշխարհին։ Ա՛հ, տակաւին յաչս իմ խաղան արեանցն վտակք որ գնային այսօր պատեալ 'ի բոսոր զգաշտ երուանդեան։ Իմ թէ և ծնունդ անծանօթ, վիշապանց գիտեմ զնս որդի, և ոչ անարդ ինչ մասն մեծի աշխարհիս և արքայութեան յատուածոցն պահեալ 'ի խանձարրոց 'ի կոտորածէ եղբարց իմ երիուց. ա՛հ իմ հարազատք, դուցէ և դուք

1 Առաջիկայ ողբերգութիւնս մեր Բագրատունի քերթողահօր երիտասարդական հասակին գրաւորական նախընծայ արդիւնքներէն մէկն է, զոր պակասաւոր յոյժ դատելով չէ ուզած ապագայից ձգել, այլ պատեր ու սյրեր է. բայց ինչպէս նոյն ժամանակ իրեն յառաջացեալ աշակերտքն ողբերգութեանն ընդհանուր պակասաւորութեանցն հետ մեծամեծ գովելի յատկութիւններ, և քան զամենն աւելի մեծ հայկաբանութիւն տեսնելով կցկտուր մասերը քովէքով բերեր ու ամբողջը ձեւացուցեր են դարձեալ, նոյնպիսի տեսութեամբ մենք ալ հիմա՝ ոչ գործոյն առհասարակ արուեստի և ողբերգութեան կանոնաց դեմ վրիպանքը մտածելով, այլ իմաստալից ու վառվռուն շարադրութեան գեղեցիկ ոճը դիտելով ուզեցինք խնդրող բանասիրաց փափաքը կատարել տպագրութեամբ ալ զայն 'ի լոյս ընծայելու, հեղինակին լուսեղէն հաւանութիւնն ալ մեզի հետ ունենալով. վասն զի վերջերս իմացած էր ու գիտէր, առանց մասնաւոր տհաճութիւն երևցնելու, իր 'ի հուր դատած երկասիրութեանը ծածուկ ձեռօք ապրած ըլլալը։

ընդ որդիս Սանատրկայ՝ անօրէն բռնաւորին սը-
րով խողխողեցայք. և ձեր այսօր խնդրեսցի վը-
րէժ։ Սարսիր, բռնաւորդ, 'ի բողոք ահարկու
արեան անմեղաց. միթէ ո՞չ գուցէ ոք այսոցիկ
ակն վրէժխնդիր յամենահայեաց բուլից ասես-
ղաց։ Ցեղակարծ իմն վտարանդութիւն Արգա-
մայ պաղեցոյց 'ի քեզ զչիթս երակաց, և յոյս մի
միայն անոսի վառեալ կայ 'ի քեզ հաւատարմու-
թեան Տուրայ. մի խաբիր մի. զոր քեզ 'ի ներ-
քոյ մտերիմ կարծեցեր՝ նա ոչ յագեցի մինչև
այսօր իսկ ընդ հուպ ոչ արբցէ կաթիլ առ կա-
թիլ զարիւն քո և զտան քո համօրէն. իմ հայ-
րենիքն են այն Ատուած, որում օրէն է զոհել
զամենայն։... Ցաւէ ինձ զի եղբայր նորա Ե-
րուազ միայն չէ 'ի քաղաքիս, թէպէտ և ոչ ինչ
կարի 'ի բացեայ։ Տակաւին ո՞չ դայ Կոռնակ...
առ գործ մի այսքան օգնականի պէտք են ինձ.
բացից սմա զամենայն մենքենայս խորհրդոցս. սա
միայն մնաց յայնչափ զօրավարաց՝ յոր կարեմ
վստահանալ. զի զկեանս իւր նա այժմիկ յինէն
ճանաչէ պարգև 'ի վտանգէ մարտին, և լուեալ
իսկ է իմ բաղում անգամ 'ի բերանոյ նորա սը-
ռունչ զԵրուանդայ։..... Ահաւասիկ է. պինդ
կալցուք զերասանակ բանին։

ՏԵՍԻԼ Բ.

ԵՐՈՒԱԶ, ՏՈՒՐ

ԵՐԶ. Արդ գտի զքեզ, քաջդ. ես ո՞ւր խնդրէի և
ո՞ւր գտանեմ։
ՏՐ. Ո՞ւր խնդրէիր զիս. ո՞չ Միհրան առաքեաց
զքեզ այսր։
ԵՐԶ. Ոչ. տեսի ես զնա զի մտանէր տագնապաւ
առ արքայ։ Այս քանի ժամք են զի ես ինքնին
զհետ քո չրջէի. էր զի 'ի խուան բազմակոյտ բա-
նակաց զապասալարսն հարցանէի զքէն, և էր
զի 'ի դղեակ բերդին զպահական. քանզի յայս-
պիսում տագնապող ժամու ո՞ւր այլ արժան էր
խնդրել զքաջդ և զմտերիմ արքայի։
ՏՐ. Խնդամ ընդ անուանդ զոր շնորհէք ինձ ա-
մենեքին. երդուեալ յարև Վահագնի, վաղա-
գոյն քան զյառնել արփւոյն՝ որ արդ 'ի հան-
գիստ փուրթայ՝ գիտասջիք զիս. տակաւին ոչ ճա-
նաչէք զիս. վաղիւ ծանիցի զինչ խտիր կայցէ
ընդ Արգամ ապստամբ և ընդ Տուր հաւատա-
րիմ. ո՞չ արդար իցէ ցասումս, ապէ ասա. այլ
նախ զայն. առ ի՞նչ եղեալ էիր զիմ կնի. զինչ
բան էր քո առ իս, ասա փոյթ. զի և ես այժմիկ
զքէն առաքեցի զՄիհրան. մեծ ինչ իրք են 'ի լե-
զուի իմում, ոչ բերեմ ժուժկալել։
ԵՐԶ. Այլ մինչև 'ի սրտէ ծանուցեալ իցեմք մի-
մեանց, զիարդ դու ընդ իս և ես...
ՏՐ. Է՛հ, ոչ անծանօթ ինչ է Կոռնակ 'ի սրտէ
ասի. ո՞ ոք ոչ գիտէ զքեզ մտերիմ զօրավիգն
արքայի. ո՞չ 'ի բաղկէ ասի քաջացն Ասորւոց և
Պարսից դողացան ոսկերք 'ի Ճակատ մարտի։
Թէպէտ և աւուրք ոչ բազում են զի իբրև ան-
ծանօթ ոք յայտնեցար քաղաքիս, անուն քո փա-
ռօք ընթանայ ընդ հրապարակս և ընդ գունդ
սպային։ Միայն կամէի իմն՝ թէ որ արտաքոյ
այսպէս քաջանուն է՝ նորա և ներքին մտեր-
մութիւն ընդ իս յայտնագոյն իցէ։

ԵՐԶ. Զայդ իսկ և ես ինքն կամէի մերկանալ քեզ.
այլ նախ տուր ինձ երդումն հաւատարմութեան
լռել զամենայն զոր ինչ լուիցես։
ՏՐ. Երդուեալ 'ի գլուխ իմ և 'ի փառս։
ԵՐԶ. Աւանիկ և յականջս ձեր հասեալ է դիցն
գուժալից պատգամ ելեալ 'ի Բագարանէ...
ՏՐ. Ա՞յն, յորում հարազատ թշնամեացն հեղա-
նի արիւն։
ԵՐԶ. Նոյն ինքն. և արդ զմինչ վճարեալ է 'ի դիցն
անմահից. 'ի մեծոյ արեամբ մերով լուսացուք
զարտասր երեսաց աշխարհիս. քեզ քաջդ յա-
ւերժացին ամք. չես դու ընդ պատուհասիւս.
մեր է յանցումն, մեր է դատակնիքս արեան։
ՏՐ. Զի՞նչ կամիցի ասել։
ԵՐԶ. Քաւ ինձ երկնչել 'ի մահուանէ. այլ զի
մտերմութեան յինէն ինդրեցեր յարացոյց,
միայն ազաչեմ պահել աշխարհիս զկիչատակ
Կոռնակայ, մանաւանդ թէ զիմ. որոյ թէպէտ և
անձն ատելի, այլ ոչ նոյնպէս կարծեմ լինիցի և
գործն, եթէ սերմն ինչ առաքինութեան բուսու-
ցանէ 'ի ծոցին երկիրս Հայոց։ Թերևս վաղիւ 'ի
մեծի մարտին մեռանիմ ես. ոչ ես բաւեսցես միւս
անգամ ապրեցուցանել զիս. այլ գիտասցես, բա-
րեկամ քաջ, ո մեռանիցի. և եթէ գիտակն արիւ-
նաշաղախ կաթի միոյ արտասուաց 'ի սրտէ քումմէ
լինիմ արժանի, գիտասցես զի ոչ զԿոռնակ
արտասուես, այլ զհարազատն արքայի զԵրուազ
արտասուես։
ՏՐ. Բա՛ռ, զինչ ասես. դո՞ւ ինքն ես Երուազ՝ եղ-
բայրս արքայի, քրմապետ 'ի Բագարան դիցն մե-
հենից. (Դիտոտ). երեսք իմ մատնեն զիս։
ԵՐԶ. Նոյն ինքն իսկ եմ. յիրաւի է, ով քաջ, այ-
լասդունել երեսացդ ընդ կարի յանդգնութիւնս
և ընդ վտանգ գործոյս՝ որով զքրմութեանն
պատմուճան ընդ զրահիցս փոխանակեցի. սա-
կայն գութ եղբօրն իմոյ արքայի բռնադատեաց
զիս 'ի սոյն. և սէր առաքինութեան և արդարու-
թեան տագնապեցոյց զիս, յափշտակեաց 'ի լը-
րումն դիցն պատգամն՝ զորս ես հարցի։
ՏՐ. Ո՞րպէս. 'ի քէն եկ այն պատգամ ահաւոր.
ե՞րբ և առ ի՞նչ։
ԵՐԶ. Լուր. յօրէ յորմէ խանձեցաւ կայծակն մար-
տի ընդ Երուանդ և ընդ Արտաշէս, խիտ առ խիտ
սեղանքն բորբոքէին ծխէին անդ 'ի Բագարան.
և ես 'ի մէջ նոցա հեծութեամբ և դողութեամբ
արկանէի աղերս անմահիցն՝ ցուցանել ինձ զելս
կատարածին. և ահա 'ի միում աւուրց որոտա-
ցոյց զքառակողմն մեհենին և այսպիսի իմն պատ-
գամ արձակեաց վերն անմահից.

« Երկրածինք, էր յանդգնիք բանալ ըզկնիք
Ճակատագրին.
Ա՞կն ունիք ըզգլուխս ձեր թափել ներքուստ
ծանօթ բաղդին.
Այն հեղեղք հրափայլ արեանց յերկրէ ասի
ոչ ցամաքին,
Թշնամի հարազատաց թէ չըսպառին ակունք
սրտին »։

ՏՐ. Ոչինչ յայտնագոյնս սովորեցաւ միշտ խօսել
Արամազդ։
ԵՐԶ. Անա, և յայտնեսցի առագաստեալ խորու-
թիւն բանիցն, եթէ ճշմարտութեամբ ինչ թարգ-
ման զիս ընկալան իւրեանց դիք։ Այն թշնամի

հարազատք ո՞ այլ ոք իցեն, քան թէ ես և եղբայրն իմ, որ անդատին 'ի բնէ թշնամութեամբ եղեալք ընդ բնիկ թագաւորին մերոյ և ընդ նորա որդիս, և այժմիկ զանազանեալ մարտիս աշխարհս. ոչ այլ ոք, ոչ, մեք միայն եմք պարտաւոր ամենայնի այսոցիկ. հապա, մեռցին անձինք մեր փոխանակ ընդ անմեղացն, այլ քաջութեամբ մեռցին: Զայս խորհեալ՝ մերկացայ ահիւ զքրմութիւնն և զգեցայ զայս զինուորութիւն. այլ 'ի ծածուկ յոյս մի հրապուրէր զիս՝ ձեռն և թիկունս տալ մինչև 'ի մահ 'ի պաշտպանութիւն եղբօրն իմոյ: Անդէն տուեալ զդէմս իմ բարեկամի իմոյ հաւատարմի 'ի քրմութենէն, ելի տագնապաւ ընդ առաջ Երուանդայ այն ինչ դարձելոյ յՈւտէացւոց. որ և յորձանս ինն բանակաց քաղաքի քաղաքի զհետ իւր առեալ ձգէր այսր յԵրուանդաշատ. և այսպէս ընդ առաջինն խառնեցայ զօրագլուխս:

Տր. Արութիւն սրտի մեծ. այլ ո՞չ ինչ արդեօք Երուանդ եղև իրազգած:

Երզ. Բնաւ իսկ ամենևին. այլ անդ 'ի Բագարան ոչ գիտեմ ո՞րպէս սպրդեալ է շնչիւն յազատանի մեհենին. և ահա այն ինչ լինէր մեզ յետ պատերազմիս 'ի քաղաքս մտանել՝ մատուցաւ ինձ նամակ մի, յորում գաղտնիք կան բաղումք:

Տր. Զինչ իցեն, ասա:

Երզ. Բուռն է ինձ այդ, մի ստիպեր զիս. երդմնի արար զիս նամակդ մի ումեք հանել 'ի վեր. բայց քեզ սիրելւոյդ այսչափ միայն. գիտուն է քեզ զի մեր չէր ոք հայր և մայր, այլ այսչափ միայն զի յաւագ տանէ գիտէաք զնոսա. և արդ երկոքեան իսկ դուն, և զհայր մեր 'ի բանակին Արգամայ ասէ:

Տր. Եւ ո՞ այն իցէ:

Երզ. Լուեայ՝ նա զանունն. և այլուստ ինչ ծանօթս առնուլ յանհնարիցն է:

Տր. Բարէ, ապա ընդ հօր քում 'ի կռիւ մատեար դու. և ո՞ գիտէ թէ և սպանեալ իսկ իցէ նա 'ի բաղկէ քումմէ:

Երզ. Ո՞ գիտէ, եղե՛ւկ զենև. առ իմքո՞, անագորոյն գիք, պաշարեցէք այսպէս զանձն իմ գողանալ զնա: Իսկ զինչ առնել էր, բարեկամ քաջ. հայրասպանութիւնս անտոյդ, այլ թէ յայտնէի զանձն իմ կամ 'ի պատերազմէն հրաժարէի, մահ անշուշտ ինձ առաջի կայր. իբրև քրմութեան կամ հայրենեաց մատնիչ և դահիճ մեռանել: Այս երկիւղ էր՝ որ զգուշացուցանէր զիս ցուցանել Երուանդայ զթուղթն թէպէտ և եղբօր. զի առաջին նմա հասանէր զդիցն պահանջել վրէժ. այս էր որ զլեզու իմ 'ի տրտունջ լուծանէր վասն պատերազմիս ընդդէմ արքայի. այս էր որ սակաւիկ մի նահանջէր զիս 'ի ռազմին. ապա թէ ոչ՝ այս բաղուկ և սիրտ 'ի մանկութենէ փորձ են 'ի զէն շարժել՝ և դիմագրաւ ոչ նեռից և սուսերաց, այլ ամէհի գազանացն ժանեաց և ճիրանաց նահատակել: Եւ թէպէտ յասպարիսի անդ բաղում անգամ ընկրկեաց զսուսերս յաւագ իշխանաց անտի, ոչ գիտեմ ո՞րպէս անկաւ ոմն 'ի սմանէ այսօր յԱխուրեան ճակատու. որ ակնարկեալ յիս, յոգւոց ել և բարձաւ 'ի թիկնապահացն մեռեալ եթէ կենդանի ոչ գիտեմ. այլ սիրտ իմ յալեկոծ մրրիկ երերեալ տանջի: Ա՜հ, հայր իմ, եթէ մեռա՞ր արդեօք. եթէ 'ի վերայ այսոցիկ և իբրև հայրասպան դատիցիմ:

Տր. Արդ խելամուտ եմ ամենայնի. ներեա ինձ, քաջազունդ, եթէ ձախողակ ինչ կարծեաք ծփէի զքէն յաղագս դժկամակութեանդ՝ զոր տեսանէի 'ի քեզ:

Երզ. Ներեմ. նա գովութեան մեա այդոցիկ առ յինէն. խորագիտութեամբ հաւատարմութիւն ունել առ արքայի, զանգիտել 'ի նենգութենէ, և զսակ հարկի ծառայութեանն հարկանել. և ներ՝ոումն խնդրել: Բարեկամութիւն թէպէտ և ընդ իս՝ որ գեղեցիկ իմաստից մռայցանս ածէ՝ լուծցի ջրեսցի. այժմիկ ահա ներողութեան ես արժանի. ներեմ քեզ՝ սակայն ոչ այնպէս հեշտեաւ: Իմ ահաւասիկ այս է. տեսցուք և զքոյդ. զինչ էր զի ինդրէիր զիս:

Տր. Զինչ այլ... 'ի վեր քան զոր ակն ունէի... գտանեմ զքեզ. գու քոյով բանիւ կարձեցեր զիմն: Սակայն լուր. գիտիցես արդեօք զի դարձաւ Միհրան 'ի հրեշտակութենէն. և որպէս ինքն իսկ պատմեր ինձ՝ գիր բերեալ է 'ի Հռոմոց. ոչ իշխեաց յայտնել ինձ զամենայն. սակայն ինձ թուի գոյժ է բօթաբեր. արքայ յաւուրս յայսոսիկ է ինչ զի և յիւրոց մտերմացն ծածկէ... ահաւասիկ նա, լուիցուք 'ի նմանէ:

ՏԵՍԻԼ Գ.

ԵՐՈՒԱՆԴ, ՄԻՀՐԱՆ, ԶԱՐԵՀ և առաջինքն:

Երդ. Աղողորմ բաղդ. ո՜հ գաղտնութեանս. զիս ինքն պատառեմ, քաջդ. սիրտ իմ մոլեգին ոչ հանդարտէ կալ 'ի կայի իւրում. այսպէս նախատել զինև, ոտնհար լինել գաղտամիտ նենգաւորութեամբ:

Տր. Դիւցազունդ, առ իմքո՞ այդ յուզումն կրից 'ի քեզ. մի թագուցաներ 'ի մինչ 'ի հաւատարիմ ծառայիցդ:

Երդ. Զիք ոք այլ հաւատարիմ առ իս. ամենեքին նենգեն ինձ:

Երզ. Ներեա, վեհդ քաջազանց. սրտմտութիւն յաչս քո հարաւ. չեմք մեք Սմբատ կամ Արգամ, չեմք Հելլէն ուխտադրուժ. և ուր Տուր է և Կոռնակ՝ անդ նենգութեան ոչ մնայ տեղի. տես զոյս թշնամանեցեր:

Երդ. Ա՜հ. ոչ Հելլէնք միայն են ուխտանենդ. այլ և յորմէ ոչ կասկածէի՝ Հռովմայեցին դըրժեաց մեզ. այսպէս խաղ առնել զինև. այ դառն արհամարհանաց:

Տր. Զինչ իցէ, զայն ասա, դիւցազունդ:

Երդ. Տակաւին ո՞չ գիտէք. աշխարհ ամենայն արդ լցեալ իցէ անարգանօքս. ժողովուրդ մի ողջոյն զտերն ձեր այպանէ, դարանի զմեզ, և գուք անգիտանա՞ք. ո՞ւր էիք ցայժմ. արք մահու էք ամենեքին:

Երզ. Հաճեսցի արքայ ցուցանել զիրն, և կամակար մեռանիմք. շատ մեծ է կորուսանել զկեանս 'ի շնորհս արքայի:

Երդ. Ահաւասիկ զայս առաքեաց առ մեզ Հռովմայեցին. (յոյսանէ վերոյլն ֆակ). զօրի մերմիսանօք. ոչ կարեմք ասել պարապեցուցանել 'ի զօրաց մերոց քեզ 'ի Թիկունս, փոխանակ ոչ կա-

միմեանս ասելոյ. և զիս կին մի Երագոն անուանէ. և թէ տեղի տուր օրինաւոր թագաւորին՝ զոր որպէս լուաք՝ հալածես. ապա թէ ոչ՝ գիտեմք ում օգնիցեմք:

Տր. Եթէ նա այդպէս զմեզ անգոսնեաց՝ մեք առաւել ևս արհամարհեսցուք զնա անփոյթ առնելով: Եւ զինչ. միթէ մի 'ի մեծազօր թագաւորացն Ասիոյ 'ի մտիցն արևու օգնութեան կարօտասցի. միթէ Պարթևք՝ Հռոմոց յաղթիս խոնարհեսցին. քաւ 'ի քէն, գիւցազունդ, անփառութիւն այդպիսի:

Երդ. Զայդ յայնժամ էր մեզ պանծալ՝ երբ բովանդակ աշխարհ թագաւորութեանս ընդ իմով ձեռամբ էր. իսկ արդ լարաբաժին եղև յապրստամբաց ասսի:

Միհ. Իսկ արդ մեք սակաւ ինչ իցեմք. մեր արդ իւրաքանչիւր տանպատիկ են անձինք՝ տանպատիկ մեռանել 'ի վերայ գիւցազունդ և աշխարհի. ոչ լաւ իցէ սակաւն և հաւատարիմ քան զբազում կեղակարծ:

Երդ. Սակայն ընդ նոսա է վայրագասուն յելուզակն Սմբատ. որ և կախարդասար խորամանկութեամբն զառածեալ խարդաւանեաց ընդ իւր զարին Արգամ՝ զիմոյ բանակի շրջնդն կայծական. չկամիմ հաւատալ զնա տիրադրուժ դաւաճան. չգիտեմ որպիսի ինչ գութ բարբառի միշտ յիս 'ի վերայ նորա: Միթէ գիտասցէ՞ նա դիւթել և զամենատես ակն սատուածոց, և կամ խուսել ճողոպրել 'ի մատալուտ արդարադատ պատուհասէն, զոր տեսանեմ ցայգ 'ի տեսիլս անրջոց, երկոցունց կողմանց անհնարին աղէտս:

Երջ. Իսկ ընդէր բնաւ երերեալ տատանեսցի ադրիական սիրտ արքայի: Ցառաջնումն անդ մարտին հանդէս արարին դիքն քում բարեկամաց՝ ընտրել, քննել և զմտերիմսն քեզ կացուցանել առաջի: Արդ յումմէ իցէ այդ երկիւղ, եթէ 'ի մէնջ...

Երդ. Ո՞գիտէ թէ բարձի և գահու ակնկալութիւն յապստամբ յելուզակէ անտի ոչ սատանեցուսցեն զառաքինութիւն սրտից թէ և զանյողդողդ: Եթէ խռուացեալն այն ալեոր Արգամ զակատեցաւ զհետ ցանկութեան սրտի, միթէ երիտասարդացն ցրտասցի՞ արիւն յերակունս, եռալ զսրտիւ և զանօրէնութեանն լեռնացուցանել ծուխ: Ո՞չ տեսանէք, զիարդ թշնամին շուրջ մածեալ է զմեզ, և 'ի տանց անգամ ճամբար նոցին երևի. ահ, ոչ աւանիկ զբռամբ ադարին երէկ զամուրս հարաւակողմանն. և ադուիսաբար լսեմ զի ելումուտ 'ի քաղաքս առնեն. նաև թարթել մի ական ոչ ինչ է նիազ որսալ յիմոցս:

Տր. Այդչափ երկիւղ, գիւցազունդ, քաջիդ նուաստութիւն և մեզ կարի եպերանք:

Միհ. Մեր արդէն տրտունջ 'ի մտի կայր՝ բողոք ունել առ քեզ վասն ուխտիցն զոր եդիք ապրստամբացն, հրեշտակութիւն ընդ միմեանս խօսելոյ, բանագնաց լինելոյ. զինչ, կամք իցեն արքայի իրաւախոհ լինել ընդ Մարին, և յամօթ առնել զսուսերս մեր:

Երդ. Երկիւղ ոչ վատութեան է ծնունդ: Համարիցիք զիս սիրել զկեանս անարգութեան և առանց թագաւորութեան. մուռացայք քանզի ըստացեալ է իմ զգահս. արիւն որդւոցն Սանարկոյ, (զայլն դուք ձեզէն յիշեցէք), տակաւին թխատիպ մածեալ երևի զորմովք ապարանիցն. ոչ այնպէս վարկպարագն ինչ դրդուեցուցանեմ ես 'ի գլխոյ ստոի զթագն արքունի: Հրեշտակութեանդ ձեռն ետուս ես հաւանութեամբ՝ զի ակնարև լու 'ի լու ամենայն հրապարակիս լսելի աբարից զանյեղի խորհուրդ կամացս, ցուցցից ուխտադրուժ տիրանենդ ապստամբաց՝ զասատ իշխանութեանս, եթէ ընդ ում 'ի կռիւ կացեալ է, և յամօթ արարիցս. ուսցին նոքա՝ զի թէպէտ և Երուանդայ տկարացին զէնք, այլ ոչ սիրտ. երբէք ոչ խոնարհեսցի նոցա այս սիրտ: Առ այս իսկ եկեալ է իմ այր, և դուք ասատ էք ամենեքեան. այժմ տեսանէք: Հուր անճարակ ճնացեալ շիջանի, ընդ անձին ոգորի. այլ 'ի հոտոտել լուցկեաց՝ թօթափէ շանթիս և բոցածաւալ յեթերս ձգտի հասանել:... Իսկ ընդէր է նոցա անագանել ցայս վայր. ոչ արդեօք անց զմեզ պայմանեալ ժամն. ոչ ունիմ ժոյժ, փութամ պատահել նոցա:

Զար. Ահաւասիկ, գիւցազունդ, Սմբատ և Արգամ ընտրելովք ոմանքք այր գիմեալ գան:

Երդ. Ի դէպ հասին. սակայն զայս խռովութիւն երեսաց չկամիմ ցուցանել նոցա. (Բաղմ):

ՏԵՍԻԼ Դ.

ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ և առաջինքն:

Սմբ. Ահաւասիկ մեք, Երուանդ, ըստ պայմանին զոր խնդրեցեր և ժամանակեցեր ընդ մեզ:

Երդ. (Ցառնէ) Զիմրդ. ես ժամանակեցի, ես խնդրեցի զձեզ. ես նախ խոնարհեցայ ընդ ձեզ. (Բաղմ) փոխեա զլեզուդ կամ թէ մի ընդ Երուանդ բարբառիր. ոչ դուք առաքեցիք առ իս նախ, և ես արքայաբար որպէս արժանն էր ժամ և տեղի սահմանեցի: Տարաժամ կամիք առաքասատել զերկիւղդ:

Արգ. Եւ այդ քեզ շնորհեալ առ 'ի մէնջ. յօգուտ աշխարհիս զամենայն ինչ յանձն առնումք:

Սմբ. Եւ որպէս ըստ պայմանին երագեցաք առ քեզ, արագագոյն ևս ելցուք յերեսաց քոց՝ եթէ տակաւին նոյն Երուանդ իցես՝ որպէս երևիս:

Երդ. Ե՞րբ տեսեր դու փոփոխեալ զԵրուանդ. զծով 'ի ցամաք և զցամաք 'ի ծով կարասցէ ոք փոխել, զԵրուանդ յիւրմէն ոչ բնաւ: Բազմեցարուք, մի յոտին կայք. աւասիկ և այսչափ խոնարհիմ ձեզ ծառայիցդ. և այս ձեզ հաւատիք անփոփոխութեան Երուանդայ:

Սմբ. Եթէ իբրև ծառայից հրաման տաս բազմելոյ, զայդ Սմբատ ոչ առցէ երբէք յանձն:

Արգ. Այլ և ոչ Արգամ. և այս մեր ոտնակապ պատգամաւորութիւն լինցի քեզ առհաւատչեայ մերոյ առ Արտաշէս փութապէս դարձին:

Երդ. Ինչ իսկ 'ի դէպ ձեզ այդ. ապա յոտին կացէք իբրև ծառայք սպասահարկուք (Սմբատ և Արգամ բաղմին) ձերոյ արքայի, որում նենգեցիք. և այժմիկ ատատնօր ժպրհեցայք համարձակել առ նա. թէ կամիք խօսեցարուք զոր ունիք, և թէ ոչ՝ Երուանդայ չէ ինչ փոյթ:

Սմբ. Սմբատայ ամենևին ոչ, եթէ այդպէս արարկոյ, (զայլն դուք ձեզէն յիշեցէք), տակաւին թխատիպ մածեալ երևի զորմովք ապարանիցն. ոչ այնպէս վարկպարագն ինչ դրդուեցուցանեմ ես 'ի գլխոյ ստոի զթագն արքունի: Հրեշտակութեանդ ձեռն ետուս ես հաւանութեամբ՝ զի ակնարև լու 'ի լու ամենայն հրապարակիս լսելի աբարից զանյեղի խորհուրդ կամացս, ցուցցից ուխտադրուժ տիրանենդ ապստամբաց՝ զասատ իշխանութեանս, եթէ ընդ ում 'ի կռիւ կացեալ է, և յամօթ արարիցս. ուսցին նոքա՝ զի թէպէտ և Երուանդայ տկարացին զէնք, այլ ոչ սիրտ. երբէք ոչ խոնարհեսցի նոցա այս սիրտ: Առ այս իսկ եկեալ է իմ այր, և դուք ատատ էք ամենեքեան. այժմ տեսանէք: Հուր անճարակ ճնացեալ շիջանի, ընդ անձին ոգորի. այլ 'ի հոտոտել լուցկեաց՝ թօթափէ շանթիս և բոցածաւալ յեթերս ձգտի հասանել:... Իսկ ընդէր է նոցա անագանել ցայս վայր. ոչ արդեօք անց զմեզ պայմանեալ ժամն. ոչ ունիմ ժոյժ, փութամ պատահել նոցա:

Զար. Ահաւասիկ, գիւցազունդ, Սմբատ և Արգամ ընտրելովք ոմանքք այր գիմեալ գան:

Երդ. Ի դէպ հասին. սակայն զայս խռովութիւն երեսաց չկամիմ ցուցանել նոցա. (Բաղմ):

ՏԵՍԻԼ Դ.

ՍՄԲԱՏ, ԱՐԳԱՄ և առաջինքն:

Սմբ. Ահաւասիկ մեք, Երուանդ, ըստ պայմանին զոր խնդրեցեր և ժամանակեցեր ընդ մեզ:

Երդ. (Ցառնէ) Զիմրդ. ես ժամանակեցի, ես խնդրեցի զձեզ. ես նախ խոնարհեցայ ընդ ձեզ. (Բաղմ) փոխեա զլեզուդ կամ թէ մի ընդ Երուանդ բարբառիր. ոչ դուք առաքեցիք առ իս նախ, և ես արքայաբար որպէս արժանն էր ժամ և տեղի սահմանեցի: Տարաժամ կամիք առաքասատել զերկիւղդ:

Արգ. Եւ այդ քեզ շնորհեալ առ 'ի մէնջ. յօգուտ աշխարհիս զամենայն ինչ յանձն առնումք:

Սմբ. Եւ որպէս ըստ պայմանին երագեցաք առ քեզ, արագագոյն ևս ելցուք յերեսաց քոց՝ եթէ տակաւին նոյն Երուանդ իցես՝ որպէս երևիս:

Երդ. Ե՞րբ տեսեր դու փոփոխեալ զԵրուանդ. զծով 'ի ցամաք և զցամաք 'ի ծով կարասցէ ոք փոխել, զԵրուանդ յիւրմէն ոչ բնաւ: Բազմեցարուք, մի յոտին կայք. աւասիկ և այսչափ խոնարհիմ ձեզ ծառայիցդ. և այս ձեզ հաւատիք անփոփոխութեան Երուանդայ:

Սմբ. Եթէ իբրև ծառայից հրաման տաս բազմելոյ, զայդ Սմբատ ոչ առցէ երբէք յանձն:

Արգ. Այլ և ոչ Արգամ. և այս մեր ոտնակապ պատգամաւորութիւն լինցի քեզ առհաւատչեայ մերոյ առ Արտաշէս փութապէս դարձին:

Երդ. Ինչ իսկ 'ի դէպ ձեզ այդ. ապա յոտին կացէք իբրև ծառայք սպասահարկուք (Սմբատ և Արգամ բաղմին) ձերոյ արքայի, որում նենգեցիք. և այժմիկ ատատնօր ժպրհեցայք համարձակել առ նա. թէ կամիք խօսեցարուք զոր ունիք, և թէ ոչ՝ Երուանդայ չէ ինչ փոյթ:

Սմբ. Սմբատայ ամենևին ոչ, եթէ այդպէս արարկոյ,

համարհեաց Երուանդ զօգուտ իւր. ան, ելցուք աստի, քաջդ։

Արդ. Անսա ինձ, քաջդ։

Տր. Աղէ վայրիկ մի ևս, և լուիցուք զինչ օգուտ մեզ 'ի պատգամաւորութենէ աստի. մինչև ցայժմ զուր բարբանջէիք, վատութեան և ինասու բանիւք զմեզ ձանձրացուցեալ։

Սմբ. Որ միանգամ գահասիրութեան եռանդիւ հարեալ 'ի շահ անձանց ևեթ հայիցին՝ ոչ 'ի գաւառին, նոցուն բարբանջանք արդեօք թուեսցին։ Մինչև մեր յարիւն հարազատութեան ներկեալ էր զսուսերս՝ առաքեցաք առ ձեզ բանիւք խաղաղութեան և սպառնալեաց, իլանել օգտիւ 'ի բռնակալ գահէ աստի, ինայել յարիւն ընտանեաց. դուք թքիք մերժեցիք զայս՝ բաղբաջանս իմն գրելով, զի տակաւին անփորձք ելից իրացն՝ 'ի զօրութիւն աշխարհիդ վստահացեալ էր։ Իսկ արդ զի ոչ միանգամ ևեթ զՀաշակ առիք խաբեբայ յուսոյդ, մեր առ ձեզ դարձեալ նոյն բաղբանք են. թէ ախորժէք՝ ընկալարուք։... Սիրտ մարդոյ է 'ի մեզ, և արիւն նոյն՝ որ յերակունս մերոց անպարտ քաղաքակցաց և որ 'ի վերաց նոցա գնան Ճապաղիք. չկանգուրժեն աչք յաղթականացս հայել 'ի թիկունս և տեսանել դիակամբք ծածկեալ և արեամբ բոսորացեալ զկանաչութիւն լերանց և դաշտաց։ Ա՛հ, միթէ մեր յարենէ՞ աստի ոռոգեսցի երկիր, յարենէ աստի մահու անմեղաց կենդանասցին տունկք, և սովին արեամբ կարմրասցին պտուղք. և ապա մեք, մեք իշխանք աշխարհիս անցեալ բաղմեսցուք անդորր սրտիւ ուտել և արբենալ խրախմիտ 'ի նոսա՝ յարիւն համազգեաց. միթէ յարենէ՞ աստի անթառամ կանաչասցին դաբնիք բոլորեալ 'ի Ճակատ յաղթողին. նա աւանիկ առաջին դաբնիք յաղթականք թացեալ յարենէ համազգեաց ծանրացեալ են 'ի գլուխս մեր, և ամաչեն կալ։ Ա՛հ, Երուանդ, երդմնեցուցեալ զքեզ յաստուածս անմահ, 'ի քոյին արև, այս է որ զմեզ ած շարժեաց խոնարհել ընդ քեզ և յայս պատգամաւորութիւն, որում չէիր իսկ արժանի, ապա թէ ոչ...

Երդ. Ապա թէ ոչ զինչ, աղէ ասա, լուիցուք և զայդ սպառնալիս, իբրև ցայս վայր ներեցաք ձեզ։ Զայդոսիկ մի՛ դուք առ մեզ բարբառիք, մեզ անկ է առ ձեզ։ Թորգոմեանց կենդանի է Թագաւորն, և 'ի գահու իւրում փառաւորեալ. ձեր սեփհական տեղի և տուն բնակութեան լերինք և անձաւք. արիք ելէք 'ի սահմանաց Թագաւորութեանս, ցրուեցէք զզօրն յիւրաքանչիւր տեղիս, զի և ես դիմամ 'ի նոսա. և առեալ ընդ ձեզ զորդի հովուի Մարի՝ զոր կամիքդ Թագաւորեցուցանել, մանաւանդ թէ Թագաւորել, երթայք սուզարուք 'ի տաղաւարս ձեր և 'ի խրշոխս. մի՛ տարապարտ մանկազարս եղիցի հայր նորա։ Ո՞չ ապաքէն նախ դուք ելէք գումարեցայք յիմ վերայ 'ի պատերազմ, և ես 'ի հարկէն բռնագատեալ՝ ըստ որում իրաւանց ազգայ Թեղագրէր սահման՝ ձեռն 'ի զէն ձգեցի պաշտպանել գահուն արքունի յերեսաց ապստամբացդ։ Զայդ մի՛ ակն ունիք ցորչափ Երուանդ զօգս զայս ընչիցէ։ Ա՛հ, մեռայց նախ քիւր մահունս, ապա թէ Մար ոք վայրագ արեխապատ գարշապարօք յանդգնեսցի կոխել աղտեղել ըզգահ Հայկազանց։

Արդ. Ոչ՞ր արդ բարբանջանք իցեն բանք. տակաւին 'ի նոյն յամառութեան պնդեալ էք՝ հովիւ մի մար ասել զԱրտաշէս։ Սակայն գիտեմ զի լեզուի սիրտ ոչ վկայէ. գիտեմ զի նա անդուլ դատիսազէ առ ձեզ, այն թէ Մարդ այդ վայրենի զիմ՞րդ ընդ որդիս Դարեհի պատուեցաւ ամուլթ և տատ. զիմ՞րդ Պարսիկք և մեծ կէս աշխարհիս ընդ նովաւ զինուորեցան. առ իմ՞ Արգամ արդարասէր 'ի նորա կողմն հատաւ. միթէ խաբեցա՞ւ և Սմբատ՝ երկրորդս Արամեանց Ոդիսևս։

Երդ. Մի՛ ընդ վայր զբաբանէք. բաղումք են 'ի վէպս յելուզակք՝ որ զորդիս իւրեանց կամ զոտարին ջանացան ամբառնալ 'ի գահ արքունի, զի և ինքեանք ընդ նոսին պաշտեսցին. սա՝ զի չունէր զանձն յառաջ արիանել իբրև արքայորդի իմոյ Նախորդիս՝ ընդ խաբս գտեալ զՄար ոմն աղայ կամ թէ զոք յիւրոցն, բաջալի, զի փառաւորագունի հացէ բարձի և պատուոյ. փառամոլութիւն է ամենայն։

Սմբ. Սմբատ եթէ մեծութեան էր ցանկացեալ, ինքնին իսկ այժմիկ թագաւորեալ էր. որ զմանուկ մի ցայս վայր անծանօթ՝ կարաց թագաւորեցուցանել, ինքն գիւրագոյն ևս. ահաւասիկ լուար, և մեք լուաք. փոխեաց 'ի խորհրդոց այսի. կամ թէ...

Երդ. Հրամանս որոտալ եկիք դուք այսր առաջի իմ, եթէ պատգամաբերք. առ դեսպանս գիտեմ զի և ինձ չէր արդեօք արժան այսպէս խօսել, այլ առ ապստամբս զինչ իցէ։ Ե՞րբ Թագաւորեաց Արտաշէս, ո՞ւր իցէ, տեսցուք և մեք զայդ Թագաւոր։ Սկիզբն բանից ձերոց օգուտ խոստանայր, և արդ զքսանամեայ խօսան յեղյեղէք դարձեալ այդչափ անմիտ էք՝ կամ թէ զմեզ անմիտս եդիք՝ որպէս զի զամս քսան չկարել մեզ խորհել զուղիղն և ընտրել 'ի մէջ այգոցիկ։ Հապա, պատերազմ, պատերազմ. ցորչափ ձեռն կայ մեր և բազուկ, գիտեմք և սրտիւ մարանչել. ժամ լեցի և վայրիկ մի դարձեալ զինուք խօսելոյ։

Սմբ. Սակայն զէնք այսպէս ոչ երկայնամտեսցեն. հապա, պատերազմ. (ելթի գնալ)։

Արդ. Ա՛հ, անսացէք. և երթիցո՞ւք դարձեալ կոտորել զանմեղ մարդիկ և արբենալ յարենէ նոցա. հապա, եկ, քաջդ, յանձն առցուք մեք խոնարհել սակաւ մի. աղէ դու, Երուանդ, վայրիկ մի անձին զգաս. տես զինաս և զաւեր աշխարհիս, տես զքո վանդ. յիշեա զի ոչ թագաւորութիւն քեզ, այլ դու շնորհեցար թագաւորութեան. գիտես, զի հայրաբար սէր և գութ բարբառի առ քեզ յիմ բերան. սակայն չկարեմ մնանիլ և դահիճ լինել իմոյ բնիկ թագաւորի. ահաւասիկ 'ի գիմաց նորա խոստանամք քեզ և զմանն մի աշխարհիս՝ տիրել խաղաղութեամբ ընդ ձեռամբ նորա...

Երդ. Երուանդ ընդ ձեռամբ այլոյ (յառնէ ցատմամբ). չարանենդ նենգաւորք, թէ և զերկին և զերկիր շնորհիցէք ինձ՝ ոչ առից 'ի ձեռաց ատելեացդ. ունիմ ես, և գիտեմ պահպանել զիմն. 'ի բաց կացէք յաչաց իմոց. յուսացա՞յք 'ի վատութիւն հրապուրել զԵրուանդ. և ոչ քայլ մի ոտին թողում ձեզ յաշխարհէ աստի, բայց

որչափ թէ գերեզմանի միոյ. Հայոց չէք այլ բնիկ թագաւոր, ահաւասիկ ես։

Սմբ. Սակայն յումմէ՞ առեր զթագդ զայդ. ո՞վ զքեզ 'ի գահ այդր բազմեցոյց։

Երդ. Դուք ինքնին, նախարարք աշխարհիս քան զքեզ լաւագոյնք։ Նա աւանիկ ոչ ոք 'ի մարդկանէ. թագաւորք յԱստուածոց կարգին և յԱստուածոց ընկենուն. նոքին են մեր հովանի։ Ախա շուրջ զինև և Հոռոմոց կայսերք վեց՝ զիս ծանեան ամս քսան։ Գիտեմ և ես, և 'ի հեռուստ տեսանէի զառագաստեալ զմրմռեալ ոխութիւն սրտիդ. ատեցեր զիս՝ զի ոչ 'ի ձեռանէ քումմէ իբրև 'ի թագադիր ասպետէ ընկալայ ես զթագս. սակայն ո՞ կացոյց զքեզ յիշխանութիւնդ։

Սմբ. Հայք համօրէն։

Երդ. Եւ զԵրուանդ նոքին եդին թագաւոր։

Սմբ. Որ եդ՝ արդ կամի հանել. իսկ զիս պահէ յիշխանութեանս։

Երդ. Նովին իսկ զի առանց քո պսակեաց զիս, ընկէց արհամարհեաց զքեզ։ Իսկ ո՞ այն՝ որ ընկենուցու զիս 'ի գահէ աստի, և ոչ նախ ինքն ընդ ինև ճնշեացի. ես ոչ զոք տեսանեմ, բայց 'ի ձէնջ յապատամբացդ, և որ ընդ ձեօք են դիւթեալ խաժամուժ։

Արդ. Ա՛հ, ոչ մեք միայն, ոչ. աղէ միանգամ Երուանդ և շուրջ զքեզ հայեաց, չէք ոք հարազատ որդի Թորգոմայ՝ որ ոչ ցանկացի թօթափել զլուծ բռնաւորաց. թէպէտ եղբայր հանդիպեացի լինել, թէպէտ որդի. երկիր և 'ի քոյոց այսի յորս յուսացար։

Երդ. Բռնաւո՞ր է Երուանդ. եթէ այդպիսի ինչ ոք էի՝ երկնչէի արդեօք, և ձեր այժմիկ չէր շունչ 'ի հագագի յօգել առաջի իմ բարբառ. սպառնալիք ձեր զգուշութիւն ածեն զինև, երկիւղ և ոչ մի։ Թէպէտ և երկիր ամենայն ծնեղովք, և աստեղք 'ի բարձանց յիմ վերայ ճակատեսցին, Երուանդ ոչ ինչ զանգիտէ. արքայից դիք են դատաւորք։ Կարկեցայք, և 'ի տանէ իմմէ՝ 'ի բաց գնացէք։

Սմբ. Այլ յաստեղս անդ և նախնին մեր ճակատագրեալ է Հայկ. գիտասցէ նա զիւրոյ աշխարհին խնդրել զվրէժ. և որպէս երբեմն յառաջին բռնաւորէն՝ և արդ նոյնպէս թեթևացուցանել զերկիր. հապա, երթիցուք։

Արդ. Ա՛հ, ակն իմ քամէ արտասուս ընդ եղկութիւն և ընդ տառապանս աշխարհիս. (Էլանէն)։

ՏԵՍԻԼ Ե.

ԵՐՈՒԱՆԴ, ԵՐՈՒԱՋ, ՑՈՒՐ, ՄԻՀՐԱՆ, ՋԱՐԵՀ։

Երդ. Բռնաւո՞ր եմ ես... 'ի վերայ ամենայն երախտեաց և բարեսէր մարդասէր կամաց բռնաւո՞ր է Երուանդ։.. Երկեայց և յիմոց աստի՝ յորս յուսացայ... ո՛չ, ոչ կարեմ հաւատալ... սակայն մի՞ եթէ.... ո՞ գիտէ։

Տր. Դիւցազունդ, անվեհեր արութեանդ, որում և արդ իսկ ականատես եղեալք՝ ոչ 'ի դէպ այդ կասկած տարակուսի. միթէ այդպէս հաւատալ արժանի իցէ նենգախօս բանից թշնամւոյ։

Միհ. Այս իսկ էր զոր ասաց երբեմն արքայ, եթէ հնարին նոքա հրապուրել զմեզ. և զինչ այլ էին բանք Արգամայ, քան թէ խորամանկ արուեստագիտութիւն 'ի պղտորել զսիրտս միամտեալս առքեզ։

Երդ. Ոչ ամենեքին նոյնպէս ծանօթ են ինձ։ Հիմ լռեալ կաս դու, Կոռնակ, չբանաս բերան։

Երզ. Եւ միթէ ցայս ժամ չէք իմ բնաւ խօսեալ. որոց շրթունք երագունք են 'ի խօսել՝ ձեռք 'ի գործ դանդաղեսցին. զարտի և զբազկի բարբառ խնդրեսցէ յինէն արքայ։

Երդ. Քաջ է. զայդ ոչ 'ի քէն միայն, այլ և յամենեցունց 'ի ձէնջ խնդրեցից. ահաւասիկ աստուածատուր սուսեր արքունի. հապա, յառաջ մատիք, զօրավարք քաջք և իմ աւագ նախարարք, հիմունք գահուս Պարթևաց. արքայն ձեր 'ի ձեզ է ապաստան. աշխարհս առ ձեզ կողկոզի փրկել յապատամբ մոլելոց անտի. վերհազուն ոգիք ձերոց նախահարց՝ զձեզ աղերսեն յերկնից կամարաց, պահել անարատ զգահս նոցա 'ի սպառնալեաց ասի նորուն անարգուաց։ Աղէ տացէ ինձ աստանօր իւրաքանչիւր երդումն ուխտի անխզելի կապոյ միաբանութեան 'ի վերջին պատերազմիս՝ որ զերկաքանչիւր կողմանց ընդ հուպ որոշեացէ վիճակ։ Գործ մի մեծ կատարեսցուք այսօր. առեալ միանգամ 'ի ներքս զամենայն աւագանին զանօրէն ապստամբացդ՝ ըմբռնեսցուք զնոսա 'ի ծուղակս մեր. սատակմամբ կարճեսցուք 'ի լուսոյ աստի՝ որում չէն արժանի։ Մի՞ ինչ զանգիտիցէք խըզճիւ. նոքին նախ ուսուցին մեզ զայդ. զնենգութիւն վանել նենգութեամբ արդար և հաւասար զէնք են. արքայն ձեր է որ հրաւիրէ զձեզ. ստուեր գահուն արքունի մեծ է յոյժ՝ ծածկել զամենայն լուսանս, և ճաճանչ թագի և ծիրանեաց՝ փարատել զամենայն խաւար. հապա առցին սուսերք...

Տր. Միհ. Զար. (Մերիոյենալ զսուրս) Աւասիկ մեք։

Տր. (Մեկոսի) Զևանալ արժան է։

Երդ. ... և որ անկցի ոք յուխտէ աստի, այս սուսերք նախ 'ի կողս նորա...

Երզ. Ա՛հ, անսա, դիւցազունդ. սիրտ իմ անկաւ. ձեռն իմ ոչ ձգի յառաջ. ո՞վ խոստումն։

Երդ. Իսկ զի՞նդ։

Տր. Բա՛ռ։

Միհ. Հրաժարի՞ Կոռնակ։

Երդ. Կոռնակ նենգի՞ ինձ։

Երզ. Ներեա՛ ինձ, դիւցազունդ, խնայեա՛ 'ի տագնապ սրտիս. դու ինքնին գիտես զսերտ մտերմութիւնս իմ և զնախանձ սրտիս և զվաստակ կամակարութեամբ 'ի վրէժ քինու փառաց քոց յարենէ թշնամեացդ։ Սիրտ իմ և կեանք և աչիւն՝ քո է ամենայն, խնդրեա զոր կամիս, սակայն զայդ երդումն անցո յինէն, մանաւանդ թէ և 'ի քէն ևս. սիրտ Երուանդայ միթէ նուաստացի՞ յայդ վատութիւն՝ խառնել նենգութիւն ընդ աչրութիւն քաջութեան։ Ոչ որ ինչ էրն Կոռնակ երբեմն, նոյն և այժմս է. բաց 'ի մտերիմ սիրոյն և յանենեանդ հաւատարմութենէն առ տէրդ իմ արքայ՝ որ ինչ արտաքոյ մնայ այսոցիկ՝ այլ ինչ է բովանդակ։

Երդ. Ա՛հ, զի՞նչ. սիրտ իմ... ոչ կարեմ ցասնուլ... սրտմտութիւն հեղձուցանէ զիս։ Ա՞յսպէս դու, Կոռնակ, հատուցանես տրխտուր.

այր մի նորատուտ եկիր յարեցար 'ի մեզ. մերով ընտանի արդարութեամբ պատկեցաք զքո աբութիւն, և 'ի դաս աւագանուոյն ընդ մտերիմն մեր կարգեցաք. և այժմիկ... ահ, և իմ կախարդեալ էին աչք հայել 'ի գնացս քո. այժմիկ անձին զգամ, առ ինչ էր զոր ստէպն տեսանէի երեսացդ հատանել, մարմնոյդ երերել. զոր և ծածկել կամելով խուսէիր յինէն. անօրէնութիւն ոչ հանդարտեր կալ առաջի աչաց Երուանդայ. և եթէ երբէք ըմբռնէիր՝ զաչս 'ի գետին բեւեռեալ անմռունչ յոգւոց հանէիր. աղէ ոչ սիրտ քո վկայէ այսոցիկ։

ԵՐԶ. Հապա դիւցազունդ, զարիւն իմ խնդրես, աւասիկ է սիրտ իմ անպատասպար. հար, մի խընայեր. հար 'ի մարմին և թող ինձ ողջ զհոգի, և մի կասկածանօքդ գիշատեր չարաչար։

ԵՐԴ. Դու ինքնին ընտրեա քեզ զարժանն։

ԵՐԶ. Ընտրեցի։

ԵՐԴ. Զինչ։

ԵՐԶ. Մեռանել։

ԵՐԴ. Եւ արժանի իսկ ես, նենգող դաւաճան (հանէ զսուրն). սակայն զի գործեմ. ով դիք, օգնեցէք. Էհ.. (կամ հարկանել)։

Միչ. Խնայեա դիւցազունդ, մի...

ԵՐԶ. Աղէ ընդէր դանդաղես. ով այն որ արդէ լուցու։

ԵՐԴ. Գթութիւնս, ա՛յ անագորոյն. ով դիք, զինչ իցէ որ զիսն տագնապէ։ Մի եթէ զառաքինութիւն կորուսանիցեմ ընդ վայր. մի եթէ արդարութիւն խաբեցայ 'ի նմա, սոսկացաւ 'ի նենգութենէ։ Բռնաւոր բազդ. զիարդ և ես ոչ կարեմ սիրել այսպէս զառաքինութիւն. հարկ է վայրիկ մի մոռանալ զնա. (Էլանէ ընդ Տորայ և Զարեհի)։

ՏԵՍԻԼ Զ.

ՄԻՉԻՐԱՆ, ԵՐՈՒԱԶ։

Միչ. Աղէ սիրեցեալդ իմ Կոռնակ, մի թագուցաներ յինէն, զինչ իցէ...

ԵՐԶ. Ասացի զամենայն. առ այժմ մի ինչ այլ բանից սպասեր. եթէ սիրես զիս՝ թոյլ տուր ինձ վայր մի խորհել առանձինն։

Միչ. Ահ, սիրելիդ իմ, խորհեա քաջ զօգուտ քոդառն է ինձ կեանքս, եթէ այդպէս գու կորուսանիցես զքոյդ. (Էլանէ)։

ՏԵՍԻԼ Է.

ԵՐՈՒԱԶ

Եթէ յայտնեմ, անշուշտ յայնժամ կորուսից։ Զինչ լինիցի յորժամ լսիցեն Հայք ամենայն եթէ Երուազ մատնիչ եղև քրիստոնէութեանն, առ ոտն եհար զդիս. ահ, մահ է անելկեաց. մեռայց, այլ գոնէ մի իբրև դիցն անարգուս։... Այլ միթէ չկարեմ ասել և եթ, թէ հայրն իմ է յաւագանին անդ թշնամեաց, ահ ոչ. քնութեանն ոչ ունիմ տանել. իսկ արդ զի գործեցից... ոչ կարեմ հարցանել ինչ զԱմբատ... 'ի քաղաքի ասա... մեռայց կամ սուգեցից հաւասարի՝ արդարև հայր մեր անդ 'ի բանակին իցէ, և ո. մանաւանդ որ տագնապէ զիս՝ ո արդեօք իցէ նախարարն այն զոր սպանի ես յանծանօթս 'ի խառն մարտի. կենդանի՞ իցէ, հայր մեր եթէ այլ ոք. հապա, փութացայց։ Այլ նախ տեսից՝ մի գուցէ խաբիցիմ, միւսանգամ ընթերցայց զթուղթս. (բանայ). Մաժան ոմն ծնաւ զմեզ յԵրագոնայ... 'ի բանակի՞ անդ է ընդ Արգամայ... հրամմն ետ սատակել զմեզ... է՞ մեր և եղբայր մի այլ երրորդ... Ներսեհ ոմն առ սարաւ զնա։ Զինչ այս աղօտ նեմութիւն. ով դիք, որ ընդեցիք 'ի մարդ զսէր բնածին, զձեզ աղերսեմ, 'ի ձեզ անկանիմ, եթէ գուցէ ոք ապաւէն անմեղութեան։

Վերջ Ա. Դրարուածոյն։

Բարոյական և քաղաքական տնտեսութիւն։

(Տես երես 7)

Ե. ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Աղքատ մարդու մը աւուրչէքը, կամ անհատ մը որ հարիւր հազարի աշխատուրեան շահ կ'ընէ։ — Բաժանումն աշխատուրեան։

Գաղղիոյ ամեն կողմէն եկած նոր լուրերը հացի նուազութեան պատճառած վախը կը պատմէին. ամենուրեք ցորենին գինը երագապէս կը բարձրանար, և արդէն այն սղութեան հասեր էր՝ որ ապրիլը դժուարին էր նոյն իսկ այն գործաւորաց համար, որոնք զբաղեալ ըլլալով շարունակաբար մի և նոյն ռոճիկը կ'ընդունէին։ Բայց արդէն իրաց բռնութիւնը քանի մը ճարտար աբուեստից մէջ նուազեցուցեր էր այս ռոճիկները։ Շատ գործանոցներ 'ի կախ թողեր էին իրենց աշխատութիւնը, և օր ըստ օրէ նորանոր գործատանց փակուիլը կը լսուէր։

Դեռևս բան մը չէր հանդիպած 'ի Միրբպոյ և ոչ 'ի շրջակայս, ուր հունձք քիչ մը նուազ ճախորդ եղեր էր քան ինչ որ ուրիշ նահանգաց մէջ։ Դարբնոցք ինչուան այն ատեն իրենց գործունէութիւնը յառաջ կը վարէին և երկաթի ճանապարհաց պատճառած զար-